



Գերմանիայի  
Դաշնային Հանրապետության  
դեսպանություն  
Երևան

## ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՆՊԱՏԱԿՈՎ

(միայն Գերմանիայի համար)

### Վիզայի համար դիմում ներկայացնելը

Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է նախապես պայմանավորվածություն ձեռք բերել: Պայմանավորվածություն կարող եք ձեռք բերել միայն առցանց (օնլայն): Օնլայն-հերթագրման համակարգ կարող եք մուտք գործել դեսպանության կայքէջի միջոցով. [www.eriwan.diplo.de](http://www.eriwan.diplo.de)

Փաստաթղթերն ընդունելուց հետո գործերի քննության և մշակման համար պահանջվում է առնվազն **4-8 շաբաթ**: Առանձին դեպքերում կարող է տևել ավելի երկար:

Հայաստանի քաղաքացիների համար այցագրի վճարը կազմում է 75 եվրո: Այն պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս՝ **համարժեք ՀՀ դրամով**: Անչափահասները վճարում են 30 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

### Դիմումի փաստաթղթերը

Դիմում հանձնելիս անհրաժեշտ է **անձամբ** ներկայացնել ստորև նշված փաստաթղթերը: Սկզբունքորեն բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել **բնօրինակով**, յուրաքանչյուրից նաև՝ **երկուական պատճեն**: Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ փաստաթղթերը պատուհանի մոտ պետք է հանձնել **երկու նույնական փաթեթով** (յուրաքանչյուր փաթեթը սկսվում է դիմում-հարցաթերթիկով և պարունակում ստորև թվարկված փաստաթղթերի պատճենները)՝ դասավորելով նշված հերթականությամբ: Բոլոր փաստաթղթերը (հատկապես անձնագրի պատճենները) անհրաժեշտ է ներկայացնել **A4 ֆորմատի** թղթի վրա: Խնդրում ենք թղթերը **չկարել, չամրացնել**: Դեսպանությանը հասցեագրված ֆաքսերը կամ գրությունները չեն տեսակավորվում և չեն կցվում գործերին: Ոչ լիարժեք դիմումներ չեն ընդունվում:

Դեսպանությունն իրեն իրավունք է վերապահում պահանջել լրացուցիչ փաստաթղթեր: Լիարժեք դիմում ներկայացնելը դեռևս բավարար հիմք չէ այցագիր ստանալու համար:

Դեսպանությունը նշում է, որ համաձայն Կացության մասին օրենքի §82-ի դիմում ներկայացնողն պարտավոր է ապահովել դիմումի լիարժեքությունը, որևէ փաստաթղթի բացակայության դեպքում դեսպանությունը համարում է, որ այն չի կարող ներկայացվել:

- գերմաներենով կամ անգլերենով, **բոլոր հարցերին հստակ պատասխաններով** **լրացրած** երկու դիմում-հարցաթերթիկ: Այն կարող եք գտնել մեր ինտերնետային էջում՝ <https://videx-national.diplo.de>

- 3 նոր, բիոմետրիկ լուսանկար (3x4 չափի), երկուսը խնդրում ենք սուսնձել դիմում-հարցաթերթիկներին
- գործող ճամփորդական անձնագիր՝ ՀՀ ելքի կնիքով, որը պետք է վավերական լինի ամենաքիչը վեց ամիս: (Անձնագրում պետք է լինի առնվազն երկու դատարկ էջ, իսկ վավերականության ժամկետը չպետք է գերազանցի 10 տարին)
- անձնագրի այն էջերի պատճենները, որտեղ առկա է կնիք, այցագիր կամ որևէ այլ նշում (2 օրինակ)
- ստորագրված հայտարարություն կեղծ տվյալների վերաբերյալ (տե՛ս դիմում-հարցաթերթիկը)
- գերմանական կացության իրավունքի պատճենը
- արտասահմանցիների հարցերով իրավասու մարմնի նախնական համաձայնությունը, միայն եթե այդ մարմինը պատրաստ է արագացնել գործընթացը

### Կարևոր ցուցումներ

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ **դեսպանության շենքում հյուպատոսական բաժնի պատուհանի մոտ** գանձվող այցագրի վճարից բացի այցագրի համար դիմելիս այլ վճար նախատեսված չէ:

Դեսպանությունը **չի համագործակցում** որևէ տուրիստական ընկերության հետ: Դա վերաբերում է նաև դեսպանության անմիջական հարևանությամբ գտնվող ծառայություններ մատուցող գրասենյակներին: Ճամփորդական կամ այլ ծառայություններ մատուցող գրասենյակների աշխատակիցների պնդումներն այն մասին, որ ինենք համագործակցում են դեսպանության հետ, **չի համապատասխանում իրականությանը:**

**Ոչ ոք** չի կարող ազդել Ձեր դիմումի հաջողության հեռանկարի վրա, քանի որ դիմումների վերաբերյալ որոշում է կայացնում բացառապես գերմանացիներից բաղկացած անձնակազմը: **Եթե Ձեզ այլ բան են խոստանում, ապա Ձեզ փորձում են խաբել: Ոչ մի դեպքում փող մի՛ վճարեք:**

Այցագրի հետ կապված հարցերի մասին արժանահավատ տեղեկություններ Դուք կարող եք անվճար ստանալ դեսպանության **հյուպատոսական բաժնի աշխատակիցներից:** Այլ անձինք տեղեկություններ տրամադրելու իրավասություն չունեն: